ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 68

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

07-ը հոկտեմբերի 2023թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 27-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում:

   /Զեկուցող ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Աթոյան/

2. ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին:

   /Զեկուցող ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Աթոյան/

3. ԵՊՀ ԻՄ-ի 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում:

   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ Ա. Դավթյան /

4. ԵՊՀ ԻՄ-ի 2024թ.-ի առկա ուսուցմամբ ընդունելության բակալավրի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի քննարկում:

   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյան /

5. ԵՊՀ ԻՄ -ի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը (նոր խմբագրությամբ) հաստատելու մասին:

   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի փոխտնօրեն Մ. Օթարյան /

6. Ընթացիկ հարցեր:

   6.1. ԵՊՀ ԻՄ-ում բարձրագույն ուսումնական հաստատությունների դիմորդների համար նախապատրաստական դասընթացների իրականացման կարգը հաստատելու մասին:

/Զեկուցող ԵՊՀ ԻՄ որակի կառավարման մշտական հանձնաժողովի նախագահ Ն. Գրիգորյան/

6.2. ԵՊՀ ԻՄ օտար լեզուների ամբիոնի ասիստենտ Մ. Կարապետյանի հեղինակած «Թելադրությունների ձեռնարկ»-ը տպագրության երաշխավորելու մասին։

/Զեկուցող ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Աթոյան/

6.3. ԵՊՀ ԻՄ-ի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ բ.գ.թ. Մ. Սարուխանյանին և ԵՊՀ ԻՄ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, մ.գ.թ. Լ. Հարությունյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին։

/Զեկուցող ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Աթոյան/

6.4. ԵՊՀ ԻՄ-ում հոգեբանական ծառայություններ մատուցելու մասին։

/Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյան /

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում

- Հաստատել նիստի օրակարգը։

Օրակարգի առաջին՝ «ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը: Նա նշեց, որ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացված 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակի գիտխորհրդի նիստերի ժամանակացույցի նախագիծը բխում է ԵՊՀ ԻՄ ռազմավարական ծրագրից, քննարկվել է ԵՊՀ ԻՄ ստորաբաժանումների ղեկավարների հետ, ներառված են ԵՊՀ ԻՄ գործունեության համար անհրաժեշտ հարցերը, իսկ ԵՊՀ համապատասխան ժամանակացույցը դեռ չի հաստատվել, եթե լինեն անհրաժեշտ հարցեր, ապա դրանք կքննարկվեն ընթացիկ հարցերում :

Արտահայտվեցին –ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը, Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի ժ/պ Ա. Մարգարյանը: Առաջարկվեց 7-րդ և 9-րդ կետերում կատարել խմբագրումներ և հաստատել գիտական խորհրդի 2023-2024՝ ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 68/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 20-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգի երկրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը:

Մ. Աթոյանը նշեց, որ հարցի ընդգրկումը օրակարգում պայմանավորված է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի 24 հուլիսի, 2023թ. N 5_Լ որոշմամբ հաստատված ԵՊՀ ԻՄ-ի նոր կանոնադրության 23-րդ կետի 1 ենթակետի պահանջով: Նախագիծը կազմվել է հիմք ընդունելով ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ-ի նոր կանոնադրությունները, ԵՊՀ գիտական խորհրդի աշխատակարգը և ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2015թ. հոկտեմբերի 31-ի նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի կանոնակարգը:

Նա նշեց, որ սույն նախագիծը (տես հավելված 2) նախօրոք ուղարկվել է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի բոլոր անդամներին և ստորաբաժանումների ղեկավարներին՝ գրավոր առաջարկ եղել է Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Սիմոնյանի կողմից, որն արդեն ներառված է առաջարկվող նախագծի մեջ:

Այնուհետև Մ. Աթոյանը առանձնացրեց ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի աշխատակարգի այն կետերը որոնք բովանդակային առումով տարբերվում են կամ չեն եղել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի կանոնակարգում: Մասնավորապես նշվեց 4-րդ կետի 11, 12 և 13-րդ կետերը՝

11) լսում է ֆակուլտետների դեկանների ամենամյա հաշվետվությունները, դրանց հիման վրա փակ, գաղտնի քվեարկությամբ գնահատում նրանց գործունեությունը: Քվեարկության արդյունքներով անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ դեկանի գործունեությունը դրական գնահատականի չարժանանալու դեպքում որոշում է կայացնում նրանց անվստահություն հայտնելու և լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ,
12) ԵՊՀ ԻՄ գործունեության նպատակներին հակասող կամ սույն կանոնադրությամբ արգելված արարք կատարելու կամ ԵՊՀ ԻՄ էթիկայի կանոնագրքով, ներքին կարգապահական կանոններով, ԵՊՀ կոլեկտիվ պայմանագրով և ներքին իրավական

այլ ակտերով ամրագրված պահանջների կոպիտ կամ պարբերական խախտման դեպքում տնօրենի կամ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի անդամների 1/3-ի առաջարկությամբ փակ, գաղտնի քվեարկությամբ և անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ որոշում է կայացնում դեկանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ,

13) հաստատում է դեկանի կատարողականի արդյունքային ցուցանիշները և անվստահություն հայտնելու հիմքերը,

5-րդ կետի 5-րդ ենթակետը. «Գիտական խորհրդի անդամի լիազորությունը դադարում է՝ մեկ տարվա ընթացքում գիտական խորհրդի առնվազն երեք նիստից անհարգելի բացակայելու դեպքում»:

Նշվեց, որ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի կազմում այսուհետ կարող են ընդգրկվել նաև հրավիրյալ անդամներ, իսկ սովորողներին առաջադրելու են ֆակուլտետային ուսանողական խորհուրդները, իսկ ընտրությունն իրականացնելու է ԵՊՀ ԻՄ ուսանողական խորհուրդը:

Մ. Աթոյանը կարևորեց նաև 16 և 17-րդ կետերը.

16) ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նիստերը կարող են անցկացվել առկա, հեռավար կամ համակցված (առկա ու հեռավար զուգացմամբ) եղանակով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ու հեռահաղորդակցության այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման միջոցով:

17) Գիտական խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է գիտական խորհրդի անդամների կեսից ավելին:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, փոխտնօրեն Մ. Օթարյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Հովհաննիսյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը և այլք: Արտահայտվողները կարևորեցին վերոհիշյալ կետերի առկայությունը և առաջարկեցին հաստատել նախագիծը համաձայն հավելված 2-ի:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 68/2

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 1-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ

կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2015թ.-ի հոկտեմբերի 31-ի նիստում հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգը:
2. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Օրակարգի երրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ի 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանի հաղորդումը:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում ունենք 15 անվանական կրթաթոշակ, ներկայացվել է 13 թեկնածու՝ երկու տեղ մնացել է թափուր: Նշվեց, որ մանդատային հանձնաժողովը մանրակրկիտ ուսումնասիրել է հարցը, մանրամասն հաշվի է առնվել նաև ուսանողների ակտիվությունը, ամեն ինչ արվել է համաձայն ԵՊՀ ԻՄ–ում գործող իրավական ակտերի: ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացված 13 անվանական կրթաթոշակի հավակնող ուսանողների ցուցակը (տես հավելված 3):

Այնուհետև ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը առաջարկեց հաստատել 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը՝ համաձայն հավելված 3-ի:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 68/3

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 8-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը, համաձայն հավելված 3-ի,
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

Օրակարգի չորրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ի 2024թ.-ի առկա ուսուցմամբ ընդունելության բակալավրի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի քննարկում» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումը։

Ա. Մակարյանը նշեց, որ այս պահին բնական գիտությունների ֆակուլտետում նախապատրաստում են ներդնել նոր կրթական ծրագիր, սակայն նոր մասնագիտություններ չենք կարող ավելացնել, որովհետև նոր արտոնագրեր չունենք, կարող ենք միայն նվազեցնել կրթական ծրագրերի քանակը, որը լուծում չէ։

Նա նշեց, որ նախորդ 2 տարիների դիմորդների շարժի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ մասնագիտություններով չունենք բավարար քանակի դիմորդներ, մասնավորապես այս տարի ունեցել ենք 170 դիմորդ։ Վտանգի տակ են՝ բավարար քանակով դիմորդներ չենք ունենում տարրական մանկավարժություն և մեթոդիկա, ռուսաց լեզու և գրականություն, ֆրանսերեն լեզու և գրականություն կրթական ծրագրերը։ Տարածաշրջանում նվազել է այս մասնագետների նկատմամբ պահանջարկը, սակայն չենք կարող դադարեցնել ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ կրթական ծրագրի իրականացումը, որովհետև ՀՀ-ն ֆրանկոֆոնիայի անդամ երկիր է, և ֆրանսիական մի շարք քաղաքների հետ ունենք համագործակցության բազմաթիվ ծրագրեր։ Վատ է նաև հայոց լեզու և գրականություն կրթական ծրագրի վիճակը՝ կայուն ունենում ենք 4, 5 կամ 6 դիմորդներ։ Համեմատաբար շատ են ֆինանսներ (ըստ ոլորտի) և զբոսաշրջություն կրթական ծրագրերի դիմորդների քանակը։

Այնուհետև Ա. Մակարյանը նշեց, որ մյուս տարի պետք է ավելի արդյունավետ աշխատել դիմորդների ներգրավման ուղղությամբ։

Մասնագիտությունների ցանկի նախագիծը կարող եք տեսնել հավելված 4-ում։

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը, և այլք։

Արտահայտվողները նշեցին, որ չնայած վարձավճարները հավաքվում են դժվարությամբ, սակայն հնարավոր չէ առանց վարձավճարների բարձրացման իրականացնել բարձրորակ կրթություն, ունենալ վերանորոգված լսարաններ և լաբորատորիաներ, արժանավայել աշխատավարձ և այլն։ Առաջարկվեց առաջիկա տնօրենության նիստում լսել Վ. Աղաբաբյանի հաշվետվությունը այս տարվա դիմորդների շարժի վերաբերյալ։

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 2 ձեռնպահ արդյունքներով, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 68/4

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 3-րդ, 14-րդ և 20-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 10-րդ և 16-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2024/2025 ուսումնական տարվա ընդունելության, բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի մասնագիտությունների ցանկը, համաձայն հավելված 4-ի:
2. Ցանկը ներկայացնել ԵՊՀ՝ ՀՀ Կառավարություն փոխանցելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգի հինգերորդ՝ «ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը (նոր խմբագրությամբ) հաստատելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանի հաղորդումը:

Մ. Օթարյանը նշեց, որ սույն կարգը ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նիստերին պարբերաբար քննարկվում է, որովհետև ԵՊՀ-ն և ՀՀ կառավարությունը համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ են անում (նախագիծը տես հավելված 5-ում):

Նա նշեց, որ խմբագրումներ եղել են կարգի 5-րդ, 7.2, 20-րդ և 21-րդ կետերում, մասնավորապես կարևորվեց 20-րդ կետի փոփոխությունը, որը արվել է ի օգուտ ուսանողների և բուհի, այն ունի հետևյալ տեսքը.

«20. Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման N 1 հավելվածում ներառված սոցիալական աջակցություն ստացող համայնքների բնակավայրերում հաշվառված և վերջին հինգ տարում (այդ թվում ընդհանուր հանրագումարով) մշտապես բնակվող ու տվյալ համայնքներից որևէ մեկի հանրակրթական (միջնակարգ կամ ավագ դպրոց), նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններն ավարտած ուսանողներին:»

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Հովհաննիսյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր

մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը և այլք:

Արտահայտվողները կարևորեցին կատարված փոփոխությունները, մասնավորապես Ա. Մակարյանը նշեց, որ սույն կանոնակարգի կետերը նույնությամբ պետք է համապատասխանեն ԵՊՀ համապատասխան կարգի կետերին, որպեսզի ուսանողները էլեկտրոնային դիմքում-հայտը առցանց լրացնելիս չառաջանան թյուրիմացություններ: Ա. Մակարյանը և Գ. Սիմոնյանը առաջարկեցին նաև 6-րդ կետը առավել հստակ դարձնելու համար հանել «և 5-րդ բաժնի դրույթները» արտահայտությունը:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 68/5

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է՝

1. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի 02.09.2023թ. թիվ 133§1 հրամանով հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը,
2. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը (նոր խմբագրություն)՝ համաձայն հավելված 5-ի,
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ընթացիկ հարցեր:

6.1 Լսեցին՝ «ԵՊՀ ԻՄ-ում բարձրագույն ուսումնական հաստատությունների դիմորդների համար նախապատրաստական դասընթացների իրականացման կարգը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ որակի կառավարման մշտական հանձնաժողովի նախագահ Ն. Գրիգորյանի հաղորդումը:

Ն. Գրիգորյանը ներկայացրեց «ԵՊՀ ԻՄ-ում բարձրագույն ուսումնական հաստատությունների դիմորդների համար նախապատրաստական դասընթացների իրականացման կարգը» (տես հավելված 6): Մասնավորապես նշեց, որ սույն կարգով

սահմանվում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում դիմորդների համար բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու նախապատրաստական դասընթացների կազմակերպման և անցկացման ընթացակարգը, այն մշակված է ՀՀ «Կրթության մասին» օրենքի, ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ կանոնադրությունների, ԵՊՀ ԻՄ-ի 2022-2026 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի հիման վրա: Մասնաճյուղը կազմակերպվելու է նախապատրաստական դասընթացներ բակալավրի կրթական ծրագրով՝ առկա և հեռակա ուսուցմամբ դիմորդների համար, դասընթացներին մասնակցությունը լինելու է վճարովի: Նշվեց, որ ԵՊՀ ԻՄ-ում նախապատրաստական դասընթացները կազմակերպվելու և համակարգվելու է Պրակտիկայի կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության բաժինը: Նախապատրաստական դասընթացներն իրականացվելու են առկա և/կամ առցանց ուսուցմամբ:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Սիրոյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Հովհաննիսյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Սիմոնյանը և այլք:

Մասնավորապես Ա. Մակարյանը նշեց, որ այս տարվա համար մեծ հույսեր չունենք, որ կլինեն բավարար քանակով դիմողներ, սակայն հանձնարարվել է ՈՒՄՎ-ին և ԿԲԴՎ բաժնին պատրաստել սույն կարգը և ներկայացնել հաստատման գործընթացը սկսելու համար: Ա. Մակարյանը առաջարկեց նաև մեկ առարկայի համար սահմանել 160 000 դրամ վճար, իսկ Գ. Սիրոյանը առաջարկեց մի քանի առարկաներ սովորողների համար սահմանել զեղչային ճկուն համակարգ:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 68/6

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում բարձրագույն ուսումնական հաստատությունների դիմորդների համար նախապատրաստական դասընթացների իրականացման կարգը՝ համաձայն հավելված 6-ի,
2. Դասընթացի տարվա վճարաչափ սահմանել 160 000 (հարյուր վաթսուն հազար)

դրամ մեկ առարկայի համար։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման և հրապարակման պահից:

6.2 **Լսեցին՝** «ԵՊՀ ԻՄ օտար լեզուների ամբիոնի ասիստենտ Մ. Կարապետյանի հեղինակած «Թելադրությունների ձեռնարկ»-ը տպագրության երաշխավորելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի գիտական քարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ օտար լեզուների ամբիոնի ասիստենտ Մ. Կարապետյանի հեղինակած «Թելադրությունների ձեռնարկ»-ը նպատակաուղղված է նպաստել ֆրանսերենի դասավանդման արդյունավետության բարձրացմանը՝ ուղղագրության, բառագիտության և քերականության ոլորտներում։ Այն իրենից ներկայացնում է տեքստերի ժողովածու՝ 50 լավագույն թելադրությունների ընտրանի ֆրանսիացի գրողների ստեղծագործություններից և տարբեր ձեռնարկներից, որից կարող են օգտվել ոչ միայն ուսանողները, այլև սկսնակ ֆրանսախոսները։ Ձեռնարկը գրախոսվել է Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամի ֆրանսերենի ամբիոնի դասախոս, բ.գ.թ. Աննա Բուդդարյանի կողմից և ներկայացվել է դրական կարծիք։ Ձեռնակի վերաբերյալ դրական կարծիք է ներկայացրել նաև ԵՊՀ ֆրանսիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Ռ. Միրզոյանը, աշխատանքը քննարկվել է և երաշխավորվել է տպագրության ԵՊՀ ԻՄ օտար լեզուների ամբիոնի նիստում։

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, փոխտնօրեն Մ. Օթարյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Հովհաննիսյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը և այլոք։

Արտահայտվողները նշեցին, որը ձեռնարկը կարող է օգտակար լինել ԵՊՀ ԻՄ-ում ֆրանսերեն լեզու դասավանդող դասախոսների և ֆրանսերեն լեզու սովորող ուսանողների համար։

Մասնավորապես Ա. Մակարյանը նշեց, որ պետք է ավարտին հասցնել ԵՊՀ ԻՄ-ում մեթոդական աշխատանքների երաշխավորման ընթացակարգը, որպեսզի ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում աշխատանքների երաշխավորման գործընթացները լինեն առավել օբյեկտիվ և գործնական։

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին*

ՈՐՈՇՈՒՄ 68/7

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 17-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի

Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել հրատարակության Միրա Կարապետյանի հեղինակած «Թելադրությունների ձեռնարկ» ուսումնական ձեռնարկը (ֆրանսերեն լեզվով)։
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

6.3 **Լսեցին**՝ «ԵՊՀ ԻՄ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ բ.գ.թ. Մ. Սարուխանյանին և ԵՊՀ ԻՄ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, մ.գ.թ. Լ. Հարությունյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի գիտական քարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը:

Մասնավորապես Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնի 2023թ. հունիսի 16-ի թիվ 22 նիստում քննարկվել է նույն ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Սարուխանյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը և, հաշվի առնելով հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները, նրան երաշխավորել են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել են ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Սարուխանյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

Գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը քննարկել է խնդրո առարկա հարցը և ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը՝ արձանագրել է հետևյալը.

ԵՊՀ ԻՄ-ի «Հայոց լեզվի և գրականության» ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Սարուխանյանը ԵՊՀ ԻՄ-ում աշխատում է 1998թ.-ի ապրիլի 1-ից առ այսօր՝ 2010թ.-ից սկսած ներքոնշյալ ամբիոնի ասիստենտ է: Վերջին երեք ուսումնական տարիներին նա ամբիոնում աշխատել է որպես ասիտենտ՝ 0,25; 0,5 այնուհետև 0,75 դրույք ծանրաբեռնվածությամբ։ Մ. Սարուխանյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2011թ.-ին: Նա ունի հրապարակված 9 աշխատանք (1 ուսումնամեթոդական և 8 գիտական հոդված), որոնցից ուսումնամեթոդական հոդվածը և գիտական 2 հոդվածները հրապարավկել են թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո:

Հաշվի առնելով այդ ամենը՝ կարելի է արձանագրել, որ ԵՊՀ ԻՄ «Հայոց լեզվի և գրականության» ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Մ.

Սարուխանյանի տվյալները բավարար են դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելու համար։

Այնուհետև ԵՊՀ ԻՄ գիտքարտուղար Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի 2023թ. ապրիլի 01-ի թիվ 10 նիստում քննարկվել է «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիանա Հարությունյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը և, հաշվի առնելով հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները, նրան երաշխավորել են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել են ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի վարիչի ժ/պ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիանա Հարությունյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ։

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը քննարկել է խնդրո առարկա հարցը և ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը՝ արձանագրել է հետևյալը.

ԵՊՀ ԻՄ «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի վարիչի ժ/պ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիանա Հարությունյանը 1999թ.-ի սեպտեմբերի 1-ին ընդունվել է աշխատանքի ԵՊՀ ԻՄ-ի «Օտար լեզուների» ամբիոնում, որպես դասախոս, 2011թ.ից՝ նույն ամբիոնի ասիստենտ, 2016թ. սեպտեմբերի 1-ին նշանակվել է ԵՊՀ ԻՄ-ի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար և աշխատում է առ այսօր։ Լ. Մ. Հարությունյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2016թ.-ին։ Նա ունի հրատարակված 16 հոդված, որոնցից 5-ը՝ գիտական և 1 ուսումնամեթոդական աշխատանք հրատարակվել են ատենախոսության պաշտպանությունից հետո։

Հաշվի առնելով այդ ամենը կարելի է արձանագրել, որ ԵՊՀ ԻՄ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժ/պ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիանա Հարությունյանի տվյալները բավարար են դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելու համար։

Մ. Աթոյանը նշեց, որ Մ. Լ. Սարուխանյանի և Լ. Մ. Հարությունյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի N 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և

դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին կարգ»-ի 5-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում կարող է շնորհելը» կետի 2)-րդ ենթակետին, ինչպես կարգի 7-րդ կետում նշված նորմատիվային փաստաթղթերի պահանջներին, և առաջարկեց երաշխավորել ԵՊՀ ԻՄ հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ բ.գ.թ. Մ. Լ. Սարուխանյանին և ԵՊՀ ԻՄ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, մ.գ.թ. ասիստենտ Լ. Մ. Հարությունյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելու համար։

Այնուհետև փակ գաղտնի քվեարկություն կազմակերպելու համար առաջարկվեց կազմել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Մ. Օթարյան, Գ. Սիմոնյան, Դ. Ալեքսանյան։

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, **որոշվեց**.

- Հաշվիչ հանձնաժողովի կազմում ընդգրկել ներքոնշյալ անձանց.
  - ✓ ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյան,
  - ✓ Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժ/պ՝ Գ. Սիմոնյան,
  - ✓ ՈՒԽ նախագահ՝ Դ. Ալեքսանյան։

Այնուհետև կազմակերպվեց փակ գաղտնի քվեարկություն, որի արդյունքները ներկայացրեց հաշվիչ հանձնաժողովի նախագահ Մ. Օթարյանը։

Փակ գաղտնի քվեարկության արդյունքներով՝ ԵՊՀ ԻՄ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ բ.գ.թ. Մ.Լ.Սարուխանյանին քվեարկել էին կողմ 25, դեմ՝ 2, անվավեր 0, ԵՊՀ ԻՄ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, մ.գ.թ. ասիստենտ Լ. Մ. Հարությունյանին քվեարկել էին կողմ՝ 22, դեմ 4, անվավեր 1։

Այնուհետև բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, **որոշվեց**.

- Հաստատել փակ գաղտնի քվեարկության արդյունքները։

Այսպիսով փակ գաղտնի քվեարկության արդյունքներով որոշվեց.

ՈՐՈՇՈՒՄ N 68/8

Հաշվի առնելով, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Լ. Սարուխանյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի N 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին կարգ»-ի 5-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում կարող է շնորհելը» կետի 2)-րդ ենթակետին, ինչպես կարգի 7-րդ կետում նշված նորմատիվային փաստաթղթերի

պահանջներին, ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 20-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Լ. Սարուխանյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Լ. Սարուխանյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

ՈՐՈՇՈՒՄ N 68/9

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, մ.գ.թ. ասիստենտ Լ. Մ. Հարությունյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի N 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին կարգ»-ի 5-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում կարող է շնորհելը» կետի 2)-րդ ենթակետին, ինչպես կարգի 7-րդ կետում նշված նորմատիվային փաստաթղթերի պահանջներին, ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 20-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, մ.գ.թ. ասիստենտ Լ. Մ. Հարությունյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, մ.գ.թ. ասիստենտ Լ. Մ. Հարությունյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

6.4 Լսեցին՝ « ԵՊՀ ԻՄ-ում հոգեբանական ծառայություններ մատուցելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումը:

Ա. Մակարյանը նշեց, որ որ ելնելով ստեղծված իրավիճակից՝ ԵՊՀ ԻՄ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոսները պատրաստակամություն են հայտնել հոգեբանական անվճար ծառայություններ մատուցել Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին, Տավուշի մարզի բնակիչներին, Մասնաճյուղի ուսանողներին և աշխատակիցներին: Այդ և հետագայում Մասնաճյուղում հոգեբանության կենտրոն ստեղծելու գործընթացում աջակցության պատրաստակամություն են հայտնել նաև ԵՊՀ մեր գործընկերները: Այնուհետև Ա. Մակարյանը առաջարկեց ԵՊՀ ԻՄ-ում ստեղծել հոգեբանության կենտրոն՝ հիշյալ ծառայությունները առավել համակարգված և արդյունավետ դարձնելու համար:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 68/10

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 16-րդ ենթակետով, 32-րդ կետի 9-րդ ենթակետով, 15-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է՝

1. ԵՊՀ ԻՄ-ում կազմակերպել և մատուցել հոգեբանական խորհրդատվական և զարգացնող բնույթի ծառայություններ՝ ԵՊՀ ԻՄ ուսանողներին, աշխատակիցներին և Տավուշ մարզի բնակիչներին,
2. ԵՊՀ ռեկտորին ներկայացնել առաջարկություն ԵՊՀ ԻՄ-ում հոգեբանական ժառայությունների կենտրոն ստեղծելու վերաբերյալ,
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ